պետ էր ամերիգանի ու բոլոր ճերմակեղէնի պատրաստութեանց և չէնչող զուարթ հովարտայ բնաւորութեան մը տէր, Եսայեան Շահում և ընկերութիւն, Մ. Սրբմաքէշեան, Գրիգոր Գուլումճեան, Պապոյ Էքիզլէր, Հայկ Էքիզլէր (որ ապա Եգիպտոսի մէջ ձեռնարկեց 1896ին առևտր. մեծկակ գործերու՝ յԱղեքսանդրիա պարէններ հայթայթելով կառավարութեան), Գրիգորիսեան Պետրոս, Գուլումճեան, Մելիքեան, Ցնտրքլեան եղբարք և Մրմրբեան, Կիւմիշկէրտան, Գառնիկ ու եղբարք Ցովակիմեան (եռանդուն որդիք Նահապետ վաճառական Պանտրբմացի Ցովհաննէս Ցովակիմեանի) որոց տոհմն ի հօրէ և ի հաւուց կրթասիրութեան և կանոնաւոր վաճառականութեան բերումներ տածած է, Արապեան Դէորգ Տրապիզոնցի, Վարդանեան Պօղոս, Թաթարեան Գրիգոր, Բափամաճեան Մկրտիչ, Ո. Սրբէնեան, Մանուկեանք, Գընաճեան, Տատուրեան, Պաքրճեան եւայլք, որ տուին Մանչէսդրրի նոր հայ գաղութին վերջնական կայք և ընկերութիւն մը արեւմտեան, կոկիկ չնորհքով եկեղեցիով մը՝ Upper-Brook փողոցին վրայ, ուր փոխանակաւ տիրացութիւն ալ կընէին վերոյիշեալներէն եկեղեցագէտ եկեղեցասէրները՝ Տէ՛ր միայն գիտէ՝ ի՛նչ խազերով։

Իրենց նախկին հովիւն եղած է Կարապետ վարդապետ Շահնազարեան՝ էջմիածինէն Պոլիս, Պոլիսէն Բարիզ, Բարիզէն Մանչէսդրը, Մանչէսդրրէն հարաւ. Ֆրանսա, անկէ Եգիպտոս, Եգիպտոսէն դարձեալ վերջնականապէս Կ. Պոլիս աստանդական։ Ինք Մանչէսդրրի մէջ հրատարակեց պարբերական հանդէս մըն ալ, և մինչեւ ցարդ իր լուսանկար պատկերը կը պատուի հոն եկեղեցատունին մէջ։ Իրեն յաջորդած է Խորէն վարդապետ Կիւրոյեան տէրվիշ ու բանասէր եկեղեցակա-